AMINTAS GROUP

# ՇՈՒԿԱՅԱԿԱՆ ԱՐԺԵՔԻ ԳՆԱՀԱՏՄԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

«ԱՄԻՆՏԱՍ ԳՐՈՒՊ» ՍՊԸ 2024

«ԱՄԻՆՏԱՍ ԳՐՈՒՊ» ՍՊԸ

*«ՀՀ ԱՆ ՀԿԱԾ» Արարատի և Վայոց Ձորի մարզային*

*բաժնի հարկադիր կատարող Ա.Գաբրիելյանին*

*Հարգելի՛ պարոն Գաբրիելյան*

Ի պատասխան Ձեր 23.02.2024թ. թիվ ելք N 0017229369 (կատարողական վարույթ` ) գրության, Ձեզ ենք ներկայացնում ՀՀ մարզ Արարատ համայնք Մասիս գ. 6-րդ թաղամաս թիվ 19 հասցեում գտնվող անշարժ գույքի սեփականության իրավունքի շուկայական արժեքի գնահատման հաշվետվությունը:

Հարգանքներով`

ՏՆՕՐԵՆ` Մ. Հակոբյան

23.04.2024թ

AMINTAS GROUP

# ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

*Գ/Կ-ԴՄ101*
*23.04.2024թ.*
*«ՀՀ ԱՆ ՀԿԱԾ» Արարատի և Վայոց Ձորի մարզային բաժնի հարկադիր կատարող Ա.Գաբրիելյանին*

*Հարգելի՛ պարոն Գաբրիելյան*

Համաձայն 11.07.2023թ.-ին կնքված թիվ ՀԿԱԾ-ԱՄԳ/ԱԳԳԾ-23/1 պայմանագրի և ի կատարումն Ձեր 23.02.2024թ. թիվ ելք N 0017229369 (կատարողական վարույթ՝ 11760562) գրության, Ձեզ ենք ներկայացնում ՀՀ մարզ Արարատ համայնք Մասիս գ. 6-րդ թաղամաս թիվ 19 հասցեում գտնվող հողամասի սեփականության իրավունքի շուկայական արժեքի գնահատման հաշվետվությունը:

Գնահատման ներկայացված հողամասը (անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման վկայական թիվ 08082016-03-0002, հաստատված 08.08.2016թ.) սեփականության իրավունքով պատկանում է քաղաքացի :

Համաձայն գնահատման ՀՀ մարզ Արարատ համայնք Մասիս գ. 6-րդ թաղամաս թիվ 19 հասցեում գտնվող՝ 1300.0քմ մակերեսով հողամասի սեփականության իրավունքի շուկայական արժեքը առ 23.02.2024թ. կազմում է **5,700,000 ( հինգ միլիոն յոթ հարյուր հազար)** ՀՀ դրամ:

Կից ներկայացվում է գնահատման ներկայացված անշարժ գույքի սեփականության իրավունքի շուկայական արժեքի գնահատման հաշվետվությունը կազմված 21 էջից:

ՀԱՐԳԱՆՔՆԵՐՈՎ՝

ՏՆՕՐԵՆ՝ Մ. Հակոբյան

ԳՆԱՀԱՏՈՂ՝ Հ. Ղասաբյան
Վկայական ԳԳ-2022-65

Գնահատումը իրականացվել է Անշարժ գույքի գնահատման գործունեության մասին «Հայաստանի Հանրապետության օրենքի», ինչպես նաև «Հայաստանի Հանրապետությունում անշարժ գույքի գնահատման ստանդարտի» պահանջներին համաձայն:

Արգավնի փողոց 23/6
«ՏՈՒՆ ԴԵՊՈ» համալիր
Էլ. փոստ amintasgroup@mail.ru

Հեռ (010) 43 22 76
Բջջ. (094) 43 22 76
Բջջ. (096) 43 22 76

## 1.7. ԳՆԱՀԱՏՄԱՆ ԱՐԺԵՔԻ ՏԵՍԱԿԸ

**Գնահատման արժեքի տեսակը վերոգրյալ հասցեում գտնվող անշարժ գույքի սեփականության ավունքի շուկայական արժեքի որոշումն է տեղազննության օրվա դրությամբ:**

Սույն հաշվետվության մեջ *"ՇՈՒԿԱՅԱԿԱՆ ԱՐԺԵՔ"* հասկացությունը մեկնաբանվում է հետևյալ րով.

*Շուկայական արժեքը հաշվարկային դրամական մեծություն է, որով հավանաբար րակնանցվեր, գնահատման ամսաթվի դրությամբ, շահագրգիռ կողմերի միջև, բաց և ցակցային շուկայում գնահատվող օբյեկտի փոխանակում, որի պայմաններում կողմերից րաքանչյուրը, իրազեկված լինելով, գործում է ողջամտորեն և առանց հարկադրանքի:*

## 1.8. ԳՆԱՀԱՏՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑԸ

Գնահատման աշխատանքների ընթացակարգը բաղկացած է հետևյալ հաջորդական ուլերից. նախապատրաստական փուլ և հիմնական փուլ :

**Նախապատրաստական** փուլում իրականացվում է՝

գնահատվող օբյեկտի փաստաթղթերի հավաքագրում և ուսումնասիրություն, պատվերի նդունում,

գնահատման առաջադրանքի ձևակերպում և պայմանագրի կնքում:

**Հիմնական** փուլում իրականացվում է՝

գնահատվող օբյեկտի տեղազննում (լուսանկարում) (կախված գնահատվող օբյեկտի եսակից),

գնահատման համար անհրաժեշտ տեղեկատվության հավաքագրում, մշակում և երլուծություն,

գնահատման համապատասխան սկզբունքների, մոտեցումների և մեթոդների ընտրություն,

գնահատում՝ ընտրված մոտեցման (կամ մոտեցումների) կիրառմամբ,

վերջնական արդյունքի հաշվարկման նպատակով տարբեր մոտեցումներով հաշվարկված րդյունքների համադրում,

հաշվետվության կազմում և տրամադրում

## 1.9. ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻ ԳՏՆՎԵԼՈՒ ՎԱՅՐԻ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ

Գնահատվող անշարժ գույքը գտնվում է ՀՀ մարզ Արարատ համայնք Մասիս գ. 6-րդ աղամաս թիվ 19 հասցեում: Գնահատվող անշարժ գույքը գտնվում է կադաստրային րածագնահատման 14-րդ գնային գոտում.

ԱՂՅՈՒՍԱԿ 2

| ԳՈՏԻՆ | ԳՈՏԻԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՇԵՆՔԵՐԻ ԳՈՐԾԱԿԻՑԸ | ԳՈՏԻԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՀՈՂԵՐԻ ԳՈՐԾԱԿԻՑԸ | ՀՈՂԱՄԱՍԻ ԿԱԴԱՍՏՐԱՅԻՆ ԱՐԺԵՔԸ |
|---|---|---|---|
| *XIV* | *0,1209* | *0,0037* | *1 221,00* |

- **ՀՀ քարտեզը, որտեղ գտնվում է գնահատվող հողամասը**

https://www.google.com/maps/place/39%C2%B059'35.1%22N+44%C2%B029'31.7%22E/@40.0048326,44.4733003,13.54z/data=!4m4!3m3!8m2!3d39.993071!4d44.492136?entry=ttu




## 1.10. ԳՆԱՀԱՏՄԱՆ ՆԵՐԿԱՅԱՑՎԱԾ ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻ ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Գնահատման է ներկայացված հողամասի սեփականության իրավունքի ամբողջ փաթեթը:

| | |
|---|---|
| Հասցեն | ՀՀ մարզ Արարատ համայնք Մասիս գ. 6-րդ թաղամաս թիվ 19 |
| Վկայականի համարը, հաստատման ամսաթիվը | 08082016-03-0002, հաստատված 08.08.2016թ. |
| Սեփականատերը | |
| Կադաստրային ծածկագիր | 03-057-0039-0003 |
| Նպատակային նշանակությունը | բնակավայրերի |
| Օգտագործման նպատակը | բնակելի կառուցապատման |
| Հողամասի չափը (քմ) | 1 300.0 քմ |
| Իրավունքի տեսակը | սեփականություն |
| Լրացուցիչ նշումներ | հողամասը հարթ է, կոմունիկացիաների հնարավորությամբ, հողամասում կառուցված է շինություն, որը նշված չէ սեփականության վկայականում, հետևաբար այն չի գնահատվել |
| տրանսպորտային մատչելիությունը | միջին |

Ստորև ներկայացվում է գնահատման ներկայացված հողամասի որոշ լուսանկարներ.